«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 23/562

«14» 05 2019թ.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱՅԱՆԻՆ

/ՀՀ, Կոտայքի մարզի, քաղաք Բյուրեղավան,
Զ.Անդրանիկի փողոց 32/48/

Հարգելի պարոն Բաբայան,

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետև՝ Համալսարան) և Ձեր միջև 2019 թվականի հունվարի 16-ին կնքված շինանյութերի մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2019/7-3-ԵՊԲՀ-1» պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 2019 թվականի հունվարի 29-ին կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) համաձայն, Դուք պարտավոր էիք համաձայնագրի կնքման օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում մատակարարել Պայմանագրով նշված ապրանքները, սակայն ապրանքների մատակարարում տեղի չի ունեցել:

Համալսարանի ռեկտորի հրամանով սահմանված պատասխանատու ստորաբաժանման կողմից 2019 թվականի մարտի 5-ին գրավոր սահմանվել է նոր ժամկետ՝ մինչև 2019 թվականի մարտի 11-ը, որի վերաբերյալ պատշաճ եղանակով Ձեզ իրականացվել է տեղեկացում, սակայն Ձեր կողմից նոր սահմանված ժամկետներում նույնպես մատակարարում տեղի չի ունեցել:

2019 թվականի մարտի 15-ին երկրորդ անգամ սահմանվել է ապրանքների համար մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2019 թվականի մարտի 22-ը և պատշաճ եղանակով իրականացվել է տեղեկացում, սակայն մինչ օրս Ձեր կողմից չի իրականացվել թիվ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7 ենթակետը և 6.2 կետը՝ Համալսարանը 2019 թվականի մայիսի 13-ից՝ միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը, որի

ընդհանուր արժեքը կազմում է՝ 304200 (երեք հարյուր չորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ Դուք պարտավոր եք սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Համալսարանի 11500166513800 «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում գործող հաշվեհամարին փոխանցել 12776 (տասներկու հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ (պայմանագրի 6.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Անհատ Ձեռնարկատեր Գրիգոր Բաբայանից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց (տուժանք) 30420 (երեսուն հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամի չափով՝ 11500166513800 հաշվեհամարին:

Հարգանքով՝

Ռեկտոր Արմեն Մուրադյան